XIX Դ. ՎԵՐՋԻ ԵՎ XX Դ. ՍԿԶԲԻ ՀԱՅ-ՌՈՒՍ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՍՈՎԵՏԱՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ռ. Վ. ՇԱՀԻՆՅԱՆ

Նշանակալից է սովետահայ պատմագրության վաստակը հայ-ռուսական հարաբերությունների պատմության դիտական մշակման և ամբողջացման գործում։ Անցած հինգ տասնամյակների ընթացքում հրապարակ են եկել մի շարք մենագրություններ, հրատարակվել են փաստաթղթերի առանձին ժողովածուներ, պաշտպանվել են ոչ քիչ թվով դոկտորական և թեկնածուական դիսերտացիաներ՝ նվիրված հայ-ռուսական հարաբերությունների պատմության առանձին պրոբլեմներին։ Դրանք արժեքավոր ներդրում են հայ և ռուս ժողովուրդների տնտեսական, քաղաքական, մշակութային, ռազմական և հեղափոխական կապերի ու համագործակցության, երկու ժողովուրդների դարավոր բարեկամական կապերի ու հարաբերությունների պատմության մարքսիստական լուսաբանման և ամբողջացման գործում։

Հայ և ռուս ժողովուրդների հարաբերությունների ամբողջական պատմությունն ուսումնասիրելիս սովետահայ պատմաբանները կարևոր տեղ են հատկացրել երկու ժողովուրդների հեղափոխական համագործակցությանը, մի պրոբլեմ, որը ըստ ամենայնի քննարկվել ու արժեքավորվել է մեր պատմագրության կողմից և այսօր էլ պահպանել է իր արդիական նշանակությունը։ Գիտական կարևորություն է ներկայացնում նաև սույն պրոբլեմի պատմագիտական վերլուծությունը, որը հնարավորություն է ընձեռում ամփոփելու և հնարավորին չափով ընդհանրացնելու պատմագրության այդ բնագավառի նվաճումները, կանխանշելու չուսումնասիրված կամ թեր ուսումնասիրված հարցերը, դրանց վրա բևեռելով հետազոտողի ուշադրությունը։

Հայ և ռուս ժողովուրդների հեղափոխական-ազատագրական կապերն ու համագործակցությունը ունեցել են իրենց դիալեկտիկ զարգացման էտապները։ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին պայմանավորեց և հող ստեղծեց հայ և ռուս ժողովուրդների սերտ մերձեցման համար, հայ հասարակական միտքը ներգրավելով ռուս ժողովրդի սոցիալ-քաղաքական և գաղափարական ոլորտներում կատարվող տեղաշարժերի մեջ։ Այդ տեղաշարժերի ընթացքով և բարերար ազդեցությամբ էր պայմանավորված XIX դ. 50—60-ական թվականների հայ կյանքը համակած ազգային այն զարթոնքը, որը հայ առաջավոր միտքը պոկելով ֆեոդալական ավանդներից՝ մղեց դեպի համադեմոկրատական գաղափարախոսություն։

Հայ և ռուս հեղափոխական-ազատագրական համագործակցության առաջին այս էտապը *սկզբնավորվելով XIX դ. 50—60-ական թվականների՝ Ռուսաստանի տարաստիճան մտավորականության լուսավորական համընդհանուր շարժմամբ՝ գոյատևեց մինչև դարի 90-ական թվականները, երբ Ռուսաստանի հեղափոխական-ազատագրական շարժումները թևակոխեցին պրոլետարական էտապ։*

XIX դ. 90-ական թվականներից հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ սկսվեց մի ժամանակաշրջան, երբ հրապարակ էին իջնում հայ առաջին մարքսիստները, որոնք ազգային-ազատագրական շարժման հարցերը շաղկապում էին համառուսաստանյան պրոլետարիատի գլխավորած համադեմոկրատական շարժման հետ։ XIX դ. 90-ական թվականների երկրորդ կեսին սկսվեց հայ և ռուս հեղափոխական համագործակցության պրոլետարական էտապը (1895—1917)։ Այս էտապի բնորոշ գիծն էր՝ ստեղծել համառուսաստանյան պրոլետարիատի միասնական ճակատ ընդդեմ ցարիզմի ու ցարիզմի տապալմամբ լուծել ռուս և Ռուսաստանի այլ ժողովուրդների ազգային և սոցիալական ազատագրման խնդիրը։

Հայ և ռուս ժողովուրդների հեղափոխական համագործակցության երրորդ էտապը սկսվում է Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակով և ավարտվում Հայաստանում սովետական կարգերի հաստատմամբ։ Այդ ժամանակաշրջանի հայ և ռուս ժողովուրդների հեղափոխական համագործակցության հիմնական նպատակն էր պաշտպանել Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները և համառուսաստանյան պրոլետարիատի աջակցությամբ լուծել հայ ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրության խնդիրը։

Տակավին գարասկզբին, երբ Հայաստանում դեռ նոր էր ծիլեր արձակում մարքսիզմը, հայ մարքսիստներն իրենց աշխատություններում և ելույթներում կանխանշում էին մարքսիզմի, Վ. Ի. Լենինի և լենինյան գաղափարների փրկարար դերը հայ ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրության գործում։ Առաջին լենինյանները՝ Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Բ. Կնունյանցը և ուրիշներ ոչ միայն համառ ջանքերով պաշտպանեցին մարքս-լենինյան գաղափարները, այլև դարձան դրանց տարածման ջահակիրները և հայ ժողովրդի ճակատագրում խաղացած դերի առաջին պատմագիրները։

Հայ իրականության մեջ մարքսիստական գաղափարների տարածման առաջին պատմագիրներից էր Ս. Տ. Արկոմեդը (Գ. Ղարաջյանը), որի 1910 թ. ժնևում հրատարակված «Բանվորական շարժումը և սոցիալ դեմոկրատիան Կովկասում» աշխատությունը (ռուսերեն) մի փորձ էր լուսաբանելու Անդրկովկասում մարքսիզմի տարածման և սոցիալ-դեմոկրատական շարժման պատմությունը, սկսած նրա ձևավորման առաջին շրջանից մինչև 1904 թ.։ «Այս դրվագը,— գրում է Գ. Վ. Պլեխանովը Ս. Արկոմեդի աշխատության մասին,— վերականգնում է ընթերցողների հիշողության մեջ այնպիսի՛ փաստեր, այնպիսի գաղափարներ ու պայքարի այնպիսի՛ միջոցներ, որոնք առանձնապես պարզ ու հասկանալի են դարձնում «լիկվիդատորական» դատողությունների խայտառակ անհեթեթությունները... ընկ. Ս. Տ. Արկոմեդի գիրքը ընթերցողի հիշողության մեջ վերականգնում է ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ամենալավ ավանդները»[1]։

Ս. Արկոմեդի աշխատությունն ուշագրավ է Անդրկովկասում բանվորական շարժման ծագման, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջացման ու բանվորական առաջին ելույթների արժեքավորման տեսանկյունից։ Սակայն բավականին երկար ժամանակ Անդրկովկասի բանվորական շարժման ընթացքից կտրված լինելը և կուսակցության II համագումարից հե-

1 Ս. Տ. Արկոմեդ, Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում, մաս Ա, Երևան, 1929, էջ 20 և 30։

ատ շրջադարձը դեպի մենշևիզմ՝ իրենց կնիքն են թողել Ս. Տ. Արկոմեդի աշխատության առանձին էջերում և պայմանավորել նրա սխալ եզրահանգումը, հայ առաջին լենինյան-իսկրայական, սոցիալ-դեմոկրատական կազմակերպության՝ «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» առաջացման ակունքների մասին[2]։

Սովետահայ պատմագրության զարգացման վաղ արշալույսից, երբ պատմագիտական մտքի որոնումները հնի դեմ մղվող ցավատանջ պայքարում դեռ չէին ավարտել իրենց անցման ուղին, պատմաբանների նոր սերունդը պատմական խորը ելևէջների անաչառ նկարագրությամբ աշխատում էր բացահայտել ճշմարտությունը և մարքս-լենինյան դիրքերից լուսաբանել հայ ժողովրդի պատմության բազմաթիվ հանգուցային պրոբլեմներ, այդ թվում հայ-ռուս հեղափոխական կապերի իրական պատմությունը։

Հայ իրականության մեջ մարքսիստական գաղափարների տարածման, հայ և ռուս հեղափոխական կապերի, մարքսիզմի զարգացման լենինյան էտապում նրանց հեղափոխական համագործակցության պատմության առանձին արցեր ինքնուրույն քննարկման թեմա դարձան սովետահայ պատմագրության մեջ 1920-ական թվականներից, երբ հայ անդրանիկ մարքսիստներին հաջորդած լենինյան հին գվարդիայի նոր սերունդը՝ Ալ. Մյասնիկյանը[3], Ս. Կասյանը[4], Աշ. Հովհաննիսյանը[5], Ա. Մռավյանը[6], Ա. Կարինյանը և ուրիշներ, շարունակելով Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Բ. Կնունյանցի լավագույն ավանդները, նոր առաջընթաց քայլ կատարեց Հայաստանում մարքսիզմի տարածման, հայ և ռուս հեղափոխական կապերի պատմության լուսաբանման ու արժեքավորման գործում։

Սովետահայ պատմագրության ավագ սերնդի ներկայացուցիչները և նրանց հաջորդած պատմաբանները[7] 30—40-ական թվականներին կանխագծեցին այդ պրոբլեմի նախաշավիղը և հող նախապատրաստեցին ղրա հետագա ուսումնասիրման ու ամբողջացման համար։

1950-ական թվականներին ավելի քան ընդարձակվեցին պրոբլեմի ուսումնասիրության շրջանակները, հրապարակ եկան մի շարք ընդարձակ հոդ-

---

2 Նույն տեղում, էջ 87—88։

3 Ալ. Մյասնիկյան, Հայաստանի կոմունիստական պարտիայի նշանակությունը («Известия» ЦК КП Армении (большевиков), 25.I.1922), նույնի՝ Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924։

4 Ս. Կասյան, Հայաստանի տնտեսական, դասակարգային ստրուկտուրան, Թիֆլիս, 1923, նույնի՝ Սպեցիֆիկները և սպեցիֆիզմը, Թիֆլիս, 1928։

5 Աշ. Հովհաննիսյան, Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը («Նորք», 1923, գ. 2), նույնի՝ Դաշնակցության սոցիալական ծագումը («Նորք», 1927, գ. 1)։

6 Ա. Մռավյան, Պատմության ավանդարդում, ՌԿ(բ)Կ 25-ամյակի առթիվ («Նորք», 1923, գ. 2), նույնի՝ Երբ և ինչպես է հիմնադրվել Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, Երևան, 1928։

7 Թ. Ավդալբեկյան, «Կոմունիստական մանիֆեստի» հայերեն թարգմանությունները 1837-ից մինչև 1924 թթ. («Վերելք», 1924, № 4—5), Ս. Դինարյան, «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» հայերեն հրատարակությունների առթիվ (ՀՍԽՀ պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», 1938, գ. առաջին, Ե. Խալեյան, «Կոմունիստական մանիֆեստի» հայերեն թարգմանությունները և հրատարակությունները (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1948, № 3)։

վածներ[8] և առանձին ուսումնասիրություններ[9], պաշտպանվեցին թեկնածուական դիսերտացիաներ[10], որոնք թեև ամբողջապես նվիրված չէին մեզ հետաքրքրող պրոբլեմի լուսաբանմանը, այնուամենայնիվ, այս կամ այն չափով արտահայտում էին դրա տարբեր կողմերը և ընդարձակում ուսումնասիրության շրջանակները։

Պատահական չէ, որ XIX դ. վերջի և XX դ. առաջին տասնամյակի՝ հայ բանվորների հեղափոխական շարժումների պատմության առանձին հարցեր լուսաբանելիս՝ պատմաբաններն իրենց ուսումնասիրություններում[11] ավելի քան շոշափելի էին դարձնում հայ և ռուս ժողովուրդների հեղափոխական կապերի ու համագործակցության խնդիրը, ըստ ամենայնի գնահատում լենինյան «Իսկրայի» խաղացած դերն ու նրա նշանակությունը Անդրկովկասում, այդ թվում Հայաստանում լենինյան-իսկրայական կազմակերպությունների հիմնադրման և հեղափոխական շարժումների կազմակերպման ուղղությամբ, ընդգծում լենինյան «Իսկրայի» էջերում ակնբախ կերպով դրսևորված ռուս և հայ ժողովուրդների միասնական հեղափոխական պայքարի գաղափարը։

Հայաստանում մարքսիզմի տարածման, հայ և ռուս հեղափոխական կապերի պատմության առանձին հարցեր այս կամ այն չափով լուսաբանվել են նաև հայ հեղափոխական շարժումների և կոմունիստական կազմակերպությունների պատմությանը նվիրված աշխատություններում[12], առանձնապես հայ հեղափոխական գործիչների կյանքն ու գործունեությունը արտացոլող մենագրություններում[13]։

---

8 Վ. Ավետիսյան, «Կոմունիստական պարտիայի մանիֆեստի» հայերեն հրատարակության 50-ամյակը («Պարտիական կյանք», 1954, № 11), Խ. Բարսեղյան, Լենինյան «Իսկրան» Հայաստան առաքվելու մասին, («Լենինյան ուղիով», 1957, № 10), Е. Тонерян, О первых переводах трудов В. И. Ленина на армянский язык («Вопросы истории», 1956, № 1); В. Аветисян, О распространении марксизма в Армении («Труды объединённой научной сессии», Баку, 1957).

9 Հ. Մելիքյան, Մարքսիստական կազմակերպությունները և ռևոլյուցիոն շարժումները (1899—1908) Լոռիում, Երևան, 1957, Լ. Աբրահամյան, Հայաստանում մարքսիզմի տարածման պատմությունից, Երևան, 1959, Խ. Բարսեղյան, Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն հրատարակությունների պատմությունից, Երևան, 1960։

10 Г. А. Карапетян, Распространение марксизма в Армении (1890—1904 гг.) (автореферат кандидатской диссертации, М., 1953); С. Амирян, Распространение марксистской историко-научной мысли в армянской действительности (автореферат кандидатской диссертации, Ереван, 1956).

11 Ե. Խալեյան, Թիֆլիսի պրոլետարիատի 1901 թ. մայիսմեկյան քաղաքական ցույցը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 5, նույնի՝ Բաթումի պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարի պատմությունից (նույն տեղում, 1952, № 3), նույնի՝ Նոր նյութեր հայ բանվորների ընդհատակյա խմբակի մասին 1898—1901 թթ. (նույն տեղում, 1956, № 6), Ա. Մնացականյան, Առաջին հայ բանվորական ռևոլյուցիոն կազմակերպությունը («Պարտիական կյանք», 1956, № 10), Վ. Ավետիսյան, Հայ բանվորների առաջին մարքսիստական խմբակի պատմությունից (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1956, № 5), նույնի՝ «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիայի» մասին («Լենինյան ուղիով», 1957, № 4), Գ. Ղարիբջանյան, Վ. Ի. Լենինը և Կովկասյան հեղափոխական սոցիալ-դեմոկրատները 1893—1901 թվականներին («Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 3, էջ 85—96)։

12 «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», Երևան, 1958, «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1967։

13 Վ. Ավետիսյան, Աուրեն Սպանդարյան, Երևան, 1957, նույնի՝ Ստ. Շահումյան, կենսագրական ակնարկ, Երևան, 1953, Ա. Կարինյան, Ստ. Շահումյան (1878—

Հիշյալ աշխատությունների հեղինակները, չնայած իրենց առաջադրած պրոբլեմներին առընթեր անդրադարձել են մեզ հետաքրքրող հարցի առանձին կողմերի պարզաբանմանը, սակայն նպատակ չունենալով շարադրել հայ և ռուս ժողովուրդների մարքսիստական հեղափոխական կապերն ու համագործակցությունը որպես ինքնուրույն մի պրոբլեմ, բնականաբար, շրջանցել են այդ հարցի պատմության վերլուծումն ու արժեքավորումը։

Հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման հայ և ռուս հեղափոխական համագործակցության պատմության ամբողջացման գործում նոր առաջընթաց քայլ կատարվեց 1960-ական թվականներին, երբ լույս տեսան ավելի ծավալուն մենագրություններ՝ նվիրված Հայաստանում մարքսիզմի տարածման բազմապլան պրոբլեմի գիտական մշակմանը։

Դեռևս 1950-ական թվականներին Գ. Կարապետյանի «Մարքսիզմի տարածումը Հայաստանում (1890—1904 թթ.)» թեկնածուական դիսերտացիայով և Լ. Աբրահամյանի «Հայաստանում մարքսիզմի տարածման պատմությունից» աշխատությամբ ու դրանց հաջորդած այլ ուսումնասիրություններով ավելի քան հասունացավ հետաքրքրող պրոբլեմի ամբողջական մշակման խնդիրը։ Իրական այդ մղումով էլ 1960-ական թվականների հենց սկզբից լույս տեսան սովետահայ մի շարք պատմաբանների ուսումնասիրություններ ու հոդվածներ։

Հիշյալ պրոբլեմի շուրջը 1960-ական թվականներին հրատարակված աշխատությունների գիտական արժեքը ավելի քան շոշափելի է, քանի որ գրանցում հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման պատմությունը սերտորեն շաղկապվում է Անդրկովկասում ծավալված նույն պրոցեսների հետ ու գնահատվում Ռուսաստանում մարքսիզմի տարածման և ռուս իրականության մեջ հեղափոխական շարժումների ծավալման ֆոնի վրա։ Այս տեսակետից առաջ է մղվել նաև հայ և ռուս հեղափոխական կապերի պատմության լուսաբանումը, որի գիտական ամբողջացման համար սովետահայ պատմագրությունը դեռևս շատ անելիքներ ունի։ Հայ և ռուս հեղափոխական կապերի ու համագործակցության պատմությունը 1960-ական թվականների հենց սկզբին առաջինը ուսումնասիրության առանձին պրոբլեմ դարձրեց Զ. Գրիգորյանն իր

1918), կյանքը և գործունեությունը, Մոսկվա, 1925, Ա. Կարինյան և Դ. Սիմոնյան, Ալ. Մարտոնի-Մյասնիկյան, Երևան, 1925, Աշ. Հովհաննիսյան, Երկու բնութագիր, Երևան, 1927, Ս. Փ. Մեդվեդևա-Տեր-Պետրոսյան, Հեղափոխության հերոսը («Ընկ. Կամոն»), Երևան, 1926, Ս. Խանոյան, Սուրեն Սպանդարյան, Երևան, 1927, նույնի՝ Մելիք-Մելիքյան (Դեգուշկա), Երևան, 1928, Խ. Բարսեղյան, Ստ. Շահումյան, ժուռնալիստական-հրապարակախոսական գործունեության ակնարկ, Երևան, 1952, նույնի՝ Ստ. Շահումյան (Կյանքի ու գործունեության վավերագրական տարեգրություն), Երևան, 1963, Գ. Մնեյան, Ստեփան Շահումյանի պետական և պարտիական գործունեությունը 1900—1918, Երևան, 1958, Լ. Խուրշուդյան, Ստ. Շահումյան. պետական և պարտիական գործունեությունը 1917—1918 թվականներին, Երևան, 1959, Г. Арутюнов, Л. Тер-Мкртчян, Жизнь и деятельность С. Спандаряна, М., 1958; Հ. Ինճիկյան, Բոգդան Կնունյանց. կյանքն ու գործունեությունը, Երևան, 1957, Ա. Մնացականյան, Ալեքսանդր Մյասնիկյան, Երևան, 1955, Ա. Հարությունյան, Կամո. կյանքը և ռևոլյուցիոն գործունեությունը, Երևան, 1957, Л. Шаумян, Камо, жизнь и деятельность профессионального революционера С. Тер-Петросяна, М., 1959: Ռ. Փաշինյան, Հայ ռևոլյուցիոն կանայք, Երևան, 1963, Հ. Կարապետյան, Մեծ պայքարի մարդիկ, Երևան, 1963։

«Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը»[14] և դրան հաջորդած «Հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը (հեռհոկտեմբերյան շրջան)» երկհատորյակում։ Հեղինակը հայ և ռուս մարքսիստների գաղափարական կապը գնահատում է որպես այդ երկու ժողովուրդների բարեկամական հարաբերությունների զարգացման նոր էտապ, երբ նախկինից եկող կապերն ու հարաբերությունները խորանում և զարգանում են «նրանց շահերի ու նպատակների ընդհանրությամբ, պրակտիկ գործածության միասնությամբ»[15]։ Այդ հողի վրա էլ «հայ պրոլետարիատի ու աշխատավոր գյուղացիության ազգային ու սոցիալական ազատագրությունը սերտորեն միաձուլվեց» Վ. Ի. Լենինի գլխավորած համառուսաստանյան հեղափոխական ազատագրական շարժումների հետ, հայ և ռուս ժողովուրդների հեղափոխական կապերին տալով «բոլորովին նոր էություն ու բովանդակություն»[16]։ Զ. Գրիգորյանը հայ և ռուս հեղափոխական կապերի հիմնական գործոնը համարում է XIX դ. վերջին և XX դ. սկզբին դասակարգային պայքարում հայ և ռուս ժողովուրդների հեղափոխական ուժերի միավորման և «ռուսական բանվոր դասակարգի գլխավորությամբ համառուսաստանյան ընդհանուր հեղափոխական ճակատի ստեղծման» գաղափարը։

Զ. Գրիգորյանի կարծիքով՝ հեղափոխական կապերի առաջին քայլերը խոր արմատներ գցեցին XIX դ. 90-ական թվականների վերջերից, երբ «հեղափոխական սերտ բարեկամություն և համագործակցություն հաստատվեց Անդրկովկաս աքսորված ռուս մարքսիստների և հայ, վրացի ու ադրբեջանցի հեղափոխականների միջև»[17]։

Վ. Ի. Լենինի հետ հայ մարքսիստների կապը հեղինակը իրավացիորեն դրվատում է որպես նախաշավիղ՝ հայ ժողովրդի հեղափոխական պայքարը համառուսաստանյան բանվորական հեղափոխական շարժման հետ կապելու ճանապարհին։ Հիրավի, Վ. Ի. Լենինը չափազանց բարձր է գնահատել անդրկովկասյան բանվորական շարժման և երկրամասի առաջին մարքսիստական կազմակերպությունների ինտերնացիոնալ կազմը, ռուս և անդրկովկասյան ժողովուրդների ինտերնացիոնալ համերաշխությունը։ «Մեզ մոտ և Կովկասում,— գրել է նա,— ս.-դ. վրացիները+հայերը+թաթարները+ռուսները աշխատում էին միասին տաս տարուց ավելի միասնական ս.-դ. կազմակերպության մեջ։ Այդ ֆրազ չէ, այլ ազգային հարցի պրոլետարական լուծում»[18]։ Զ. Գրիգորյանի աշխատության մեջ վերլուծված է նաև լենինյան «Իսկրայի» խաղացած դերը, նրա նշանակությունը Անդրկովկասում լենինյան-իսկրայական կազմակերպությունների հիմնադրման, մարքսիստական գաղափարների պրոպագանդման, հեղափոխական շարժումների կազմակերպման ուղղությամբ, ընդգծված է լենինյան «Իսկրայի» էջերում դրսևորված ռուս և հայ ժողովուրդների հեղափոխական միասնական պայքարի գաղափարը։

---

14 Զ. Տ. Գրիգորյան, Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1960։

15 Զ. Տ. Գրիգորյան, Հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը (հեռհոկտեմբերյան շրջան), Երևան, 1967, էջ 68.

16 Նույն տեղում, էջ 106։

17 Նույն տեղում, էջ 73։

18 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 79։

Հայ առաջին մարքսիստների կյանքի ու հեղափոխական գործունեության, Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության, մարքսիստական աշխատությունների հայերեն առաջին հրատարակությունների վերլուծման ու գնահատման, հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման լուսաբանման գործում ուշագրավ են Վ. Ավետիսյանի աշխատություններն ու հոդվածները։ Նրա գրչին է պատկանում «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծերի» առաջին գլուխը՝ «Մարքսիզմի տարածումը, սոցիալ-դեմոկրատիայի՝ որպես գաղափարական հոսանքի առաջացումը։ Բոլշևիկյան կազմակերպությունների ձևավորումը Հայաստանում (1880-ական թվականներ—1904 թվական)» խորագրով։ Վ. Ավետիսյանը իրավացիորեն 1890-ական թվականներին Անդրկովկասում և Հայաստանում բանվորական շարժման աշխուժացումը դիտում է որպես Ռուսաստանի արդյունաբերական կենտրոններում բանվորական շարժման արդյունք և հետևանք։ Ելնելով դրանից նա գնահատում է այն գործոնները, որոնք կանխորոշեցին հայ և ռուս մարքսիստական հեղափոխական կապերն ու համագործակցությունը և պայմանավորեցին հայ իրականության մեջ մարքսիստական գաղափարների տարածումն ու ամրապնդումը։ Վ. Ավետիսյանի կարծիքով՝ Անդրկովկասում «մարքսիզմի գաղափարների առաջին պրոպագանդիստներն ու մարքսիստական խմբակների կազմակերպիչները ռուս առաջավոր ինտելիգենտներն ու բանվորներն էին, ինչպես նաև Անդրկովկասի այն ուսանողները, որոնք, սովորելով Ռուսաստանի քաղաքներում և արտասահմանում, հայրենիք էին վերադառնում մարքսիստական գաղափարները յուրացրած»[19]։

Հայ և ռուս հեղափոխական կապերի ձևավորման ու զարգացման գործում Վ. Ավետիսյանը բարձր է գնահատել Ռուսաստանի արդյունաբերական կենտրոններում ձևավորված մարքսիստական խմբերին, առանձնապես Վ. Ի. Լենինի կազմակերպած «Պետերբուրգի բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միությանը» ակտիվ մասնակցած հայ առաջին մարքսիստների գործունեությունը և դերը։ Հեղինակը հայ իրականության մեջ մարքսիստական հեղափոխական գաղափարների տարածման գործում մեծ տեղ է հատկացնում նաև մարքսիստական գրականության հայերեն առաջին հրատարակություններին, որոնց շնորհիվ «Գնալով աճում էր հայ առաջավոր բանվորների հետաքրքրությունը դեպի մարքսիզմը։ Մասնակցելով բանվորական շարժմանը, շփվելով սոցիալ-դեմոկրատների հետ և ծանոթանալով մարքսիստական գաղափարներին,— եզրակացնում է նա,— նրանք Անդրկովկասի պրոլետարիատի ընդհանուր շարքերում համախմբվում էին սոցիալ-դեմոկրատիայի դրոշի ներքո»[20]։

Հայ և ռուս մարքսիստների կապերի ու համագործակցության ասպարեզում Վ. Ավետիսյանը բարձր է գնահատում Վ. Ի. Լենինի դերը, որը «մեծ հոգատարությամբ աճեցնում էր ազգային մարքսիստական կադրեր, մշտապես օգնում էր տեղական կազմակերպություններին, խրախուսում նրանց հեղափոխական նախաձեռնությունը»[21]։ Վ. Ի. Լենինի անմիջական ղեկավարությամբ

---

19 «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1967, էջ 26։

20 Նույն տեղում, էջ 28։

21 Նույն տեղում, էջ 68։

է, որ 1900—1904 թթ. Անդրկովկասում ստեղծվեցին, ամրապնդվեցին պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներով կառուցված սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կազմակերպությունները, որոնք և գլխավորեցին բանվորների և գյուղացիների մասսայական հեղափոխական շարժումներն ընդդեմ տիրապետող դասակարգի։

Հայ մարքսիստական մտքի, Հայաստանում մարքսիզմի տարածման, հայ և ռուս մարքսիստական հեղափոխական կապերի գիտական մշակման գործում զգալի աշխատանք է կատարել նաև Խ. Բարսեղյանը, որի «Մարքսիզմի տարածումը Հայաստանում» մենագրության առաջին գիրքը[22] ամփոփում է 1880-ական թվականներից մինչև 1904 թ. ընկած ժամանակահատվածի՝ մեզ հետաքրքրող պրոբլեմի ամբողջական և ծավալուն շարադրանքը։ Ելակետային խնդիր դարձնելով մարքսիզմի տարածման սոցիալ-տնտեսական և քաղաքական նախադրյալները, նա ծանրացել է հայ պրոլետարիատի առաջացման, բանվորական շարժման առաջին քայլերի, նարոդնիկության, «լեգալ մարքսիզմի», հայ հասարակական-քաղաքական հոսանքների ու կուսակցությունների վերլուծման հարցերի վրա, ապա լուսաբանել հայ իրականության մեջ մարքսիզմի զարգացման լենինյան էտապի նախասկզբի պրոբլեմները, մարքսիստական խմբակների, լենինյան իսկրայական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների, մարքսիստական գրականության հրատարակման պատմությունը։

Խ. Բարսեղյանը վերոհիշյալ աշխատության մեջ առաջադրված պրոբլեմները քննարկում է Ռուսաստանի պրոլետարիատի դասակարգային պայքարի ընդհանուր ֆոնի վրա՝ ընդգծելով հայ և ռուս ժողովուրդների մարքսիստական հեղափոխական գաղափարների կապն ու համագործակցությունը։ XIX դ. վերջի և XX դ. սկզբի հայ հասարակական-քաղաքական կյանքի կարևոր իրադարձություններն ու տեղաշարժերը և ռուս առաջավոր պրոլետարիատի հեղափոխական ելույթները նա դիտում է որպես կարևոր ազդակներ, որոնք նպաստավոր պայմաններ ստեղծեցին հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման և բանվորական մարքսիստական առաջին խմբակների գաղափարական զինման համար։

Հայ իրականության մեջ մարքսիզմի տարածումը բնութագրելով որպես հայ հասարակական մտքի զարգացման նոր փուլ, Խ. Բարսեղյանն աշխատում է ցույց տալ հայ մարքսիստական մտքի նախամարքսյան ակունքները, Մ. Նալբանդյանի և նրա գաղափարական հետևորդների ավանդները գնահատելով որպես հայ հասարակական մտքի պատմության մեջ մարքսիզմի նախաշավիղ։

Նա ևս 1890-ական թվականներից Անդրկովկասում մարքսիստական խմբերի ու խմբակների ձևավորման գործում չափազանց բարձր է գնահատում երկրամաս աքսորված ռուս պրոֆեսիոնալ հեղափոխականների դերը, որոնց «օգնությամբ ստեղծելով իրենց մարքսիստական խումբը, հայ բանվորները տարերային տնտեսական ընդվզումներից անցան հեղափոխական, գիտակցական պայքարի... Ռուսաստանի պրոլետարիատի օրինակով, դասակարգային պայքարի բովում համոզվեցին, որ բանվորների երջանկությունն իրենց

22 Խ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում (1880-ական թթ.—1904 թ.), գ. առաջին, Երևան, 1967։

ձեռքումն է, ուժը՝ միության»[23]։ Աշխատության մեջ հանգամանորեն լուսաբանվում է Ի. Լալայանցի, Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի և շատ ուրիշների պրակտիկ գործունեությունը, «որոնք հաստատուն կերպով կանգնեցին համառուսական պրոլետարիատի հեգափոխական-ինտերնացիոնալիստական պայքարի ուղու վրա, իրենց կյանքը սերտորեն կապեցին բանվոր դասակարգի ազատագրման մեծ գործին»[24]։

Հեղինակը արժեքավորել է նաև լենինյան «Իսկրայի» բեղմնավոր գործունեությունը Անդրկովկասի հեղափոխական իրադարձությունների լուսաբանման, Հայաստանի աշխատավորության գաղափարական զինման և մարքսիստական հայ պարբերական մամուլի ձևավորման գործում։

Խ. Բարսեղյանն իրավացիորեն «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» և նրա տպագիր օրգանի՝ «Պրոլետարիատի» ստեղծումը գնահատում է որպես հայ ժողովրդի պատմության նոր էտապի սկիզբ, հասարակական քաղաքական կյանքի ու մտքի զարգացման մեծ շրջադարձ[25]։ «Միության» և «Պրոլետարիատի» շուրջը համախմբված հայ մարքսիստները — լենինյան կայուն իսկրայականները,— ընդհանրացնում է հեղինակը,— բարձր պահելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը, աշխատավոր զանգվածներին առաջնորդում էին դեպի ռուսական հեղափոխության ուղիները»[26]։

Խ. Բարսեղյանը Վ. Ի. Լենինի հայերեն հրատարակված աշխատությունները գնահատում է որպես «հզոր զենք... պրոլետարիատի ազատագրական պայքարում»[27]։

1890-ական թվականներից մինչև 1904 թ.՝ քաղաքական իրադարձություններով հարուստ շրջադարձային ու բախտորոշ ժամանակաշրջանում բանվորական հեղափոխական և ագրարային շարժումների, ազգային-ազատագրական ելույթների, ռուս պրոֆեսիոնալ մարքսիստների գաղափարական սերտ աջակցության ու համագործակցության արգասաբեր մթնոլորտում Հայաստանում ձևավորվում են լենինյան-իսկրայական կազմակերպություններ, «որոնք ամուր կերպով կանգնելով մարքսիզմի դրոշի տակ, հաջողությամբ գլխավորում են բանվորների և աշխատավոր զանգվածների մարտերը, նրանց նախապատրաստելով նոր գրոհի՝ ռուսական առաջին հեղափոխությանը»[28], երբ «բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ հայ աշխատավորության ազատագրական պայքարը միահյուսվում էր համառուսական պրոլետարիատի հեղափոխական դասակարգային պայքարին»[29], ահա Խ. Բարսեղյանի աշխատության գաղափարական հենքը։

XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայ և ռուս ժողովուրդների հեղափոխական համագործակցությունն ու համերաշխությունը լայնորեն դրսևորվեցին 1905—1907 թթ. ռուսական առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ժամանակ։

---

23 Նույն տեղում, էջ 282։
24 Նույն տեղում, էջ 298։
25 Նույն տեղում, էջ 318։
26 Նույն տեղում, էջ 318—319։
27 Նույն տեղում, էջ 363։
28 Նույն տեղում, էջ 384։
29 Նույն տեղում, էջ 422։

Սովետահայ պատմագրությունը բավականին հանգամանորեն անդրադառնալով 1905—1907 թթ. Հայաստանում հեղափոխական շարժումների լուսաբանմանը, տվել է նաև Ռուսաստանում ու Անդրկովկասում հեղափոխական շարժումների տարիներին հայ և ռուս ժողովուրդների հեղափոխական համագործակցության պատմությունը։ Դեռ 1920-ական թվականներին «Հեղափոխական և ազգային շարժումները Անդրկովկասում 1905-ին» խորագիրը կրող աշխատության մեջ Ա. Կարինյանն անդրադարձել է մեզ հետաքրքրող պրոբլեմին։ Բավականին հանգամանորեն վերլուծելով Անդրկովկասի տնտեսական կյանքի ընդհանուր պատկերը հեղափոխության նախօրյակին և ընդգծելով Վրաստանի գյուղացիության ու Բաքվի պրոլետարիատի գործադուլային շարժումների պատմությունը, նա իրավացիորեն Անդրկովկասի հեղափոխական շարժումները դիտել է համառուսաստանյան հեղափոխական շարժումների ամբողջության մեջ, կանխագծել այդ պայքարում ռուս և անդրկովկասյան բանվորների հեղափոխական համագործակցությունը։

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Հայաստանի բանվորական շարժման պատմության առանձին հարցերի ուսումնասիրության առաջին հեղինակներից էր նաև Ե. Մելիք-Յոլչյանը, որի աշխատությունն[30] իր ակընհայտ արժանիքներով հանդերձ, թերի է, առանձնապես, Հայաստանում 1905—1907 թթ. ծավալված բանվորական շարժումները համառուսաստանյան բանվորական-հեղափոխական շարժումներին կապակցելու և այս առնչությամբ՝ հայ և ռուս հեղափոխական համագործակցության գնահատման տեսանկյունից։

Հայաստանում 1905—1907 թթ. հեղափոխական շարժումների և այդ ընթացքում դրսևորված հայ և ռուս ժողովուրդների հեղափոխական կապերի պատմությունը սովետահայ պատմագրության մեջ լայն ուսումնասիրության առարկա դարձավ առանձնապես վերջին տարիներին՝ կապված ռուսական առաջին հեղափոխության 50-ամյա տարելիցի հետ։ Լույս ընծայվեցին մի շարք ուսումնասիրություններ[31], հրապարակվեցին հեղափոխության պատմությունն արտացոլող հոդվածների և փաստաթղթերի ժողովածուներ[32], պաշտպանվեցին թեկնածուական դիսերտացիաներ[33] և այլն։ 1905—1907 թթ. Հայաստանում

---

30 Ե. Մելիք-Յոլչյան, Չորս տարի Հայաստանի բանվորական շարժման պատմության (1903—1907 թթ.), Երևան, 1924։

31 Ե. Աղայան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., Երևան, 1955, Վ. Պարսամյան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., Երևան, 1955, Գ. Հարությունյան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907, Երևան, 1956, Д. Е. Габриелян, Революция 1905—1907 гг. в Армении. М., 1955; Բ. Լալաբեկյան, 1905 թ. հոկտեմբերի համառուսաստանյան քաղաքական գործադուլը և նրա արձագանքները Հայաստանում, Երևան, 1956, Հ. Մելիքյան, Մարքսիստական կազմակերպությունները և ռևոլյուցիոն շարժումները Լոռիում, Երևան, 1957։

32 «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին (1905—1907 թթ.)», Երևան, 1955, «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ.», Երևան, 1955, «Революционное движение в Армении 1905—1907 гг.» (сборник документов и материалов) под ред. А. Н. Мнацаканяна, Ереван, 1955; «Революция 1905—1907 гг. в национальных районах России» (сборник статей), М., 1955.

33 Д. Мурадян, Рабочее движение в Армении в 1905—1907 гг. (автореферат кандидатской диссертации), Ереван, 1956; А. М. Арутюнян, Революционное движение в Армении 1905—1907 гг. (автореферат кандидатской диссертации), М., 1958.

հեղափոխական շարժումների պատմությանը նվիրված ուսումնասիրություններից ամենածավալունը Ծ. Աղայանի աշխատությունն է, ուր հեղինակը գիտական շրջանառության մեջ գնելով արխիվային նոր նյութեր, գնահատում և վերագնահատում է հեղափոխական շարժումների գիտական պատմությունը։ Ծ. Աղայանի աշխատության կարևորագույն արժանիքներից մեկն էլ այն է, որ հեղինակը նորահայտ վավերագրերի գիտական վերլուծմամբ հանգում է մի շարք ուշագրավ եզրահանգումների, Հայաստանում ծավալված հեղափոխական շարժումները գնահատում համառուսաստանյան և անդրկովկասյան հեղափոխական պայքարի հետ սերտորեն շաղկապված։

Հաջողված փորձ է Դ. Մուրադյանի աշխատությունը[34], որտեղ շարադրված է Հայաստանում բանվորների և գյուղացիների կողմից 1905—1907 թթ. մղված հեղափոխական պայքարի հերոսական դրվագներով լի պատմությունը։

Ռուսական առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության տարիներին անդրկովկասյան ժողովուրդների հեղափոխական շարժումների պատմության շարադրման փորձ է նաև Ա. Հարությունյանի ուսումնասիրությունը[35], ուր շեշտվում է անդրկովկասյան և ռուս ժողովուրդների՝ ցարիզմի դեմ միասնական հեղափոխական պայքարի ու նրանց համերաշխության գաղափարը։

Այդ պրոբլեմի շուրջը 1950-ական թվականներից լույս տեսած գրականությանը բնորոշ է Հայաստանում ծավալված հեղափոխական շարժումների սոցիալ-քաղաքական նախադրյալների՝ հայ իրականության մեջ ծավալված և համառուսաստանյան հեղափոխական շարժումների օրգանական կապի ու այդ պայքարում դրսևորված երկու ժողովուրդների հեղափոխական համագործակցության լուսաբանումը։ Հայաստանում 1905—1907 թթ. հեղափոխական շարժումներին նվիրված աշխատությունների ամբողջական արժեքն այն է, որ դրանց հեղինակները լուրջ ծառայություններ են մատուցել այդ պրոբլեմի ամբողջացման գործում, ըստ էության լրացնելով միմյանց և տալով հետաքրքրող պրոբլեմի ամբողջական պատկերը[36]։

Այսպիսով, հայ իրականության մեջ մարքսիստական գաղափարների տարածման և ամրապնդման, XIX դ. վերջի XX դ. սկզբի հայ և ռուս հեղափոխական կապերի ու համագործակցության պատմության գիտական մշակման ու ամբողջացման գործում սովետահայ պատմագրությունը ձեռք է բերել լուրջ նվաճումներ։

---

34 Դ. Մուրադյան, Հայաստանը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին (1905—1907 թթ.), Երևան, 1964։

35 А. Арутюнян, Народы Закавказья в борьбе против царизма в годы первой русской революции, Ереван, 1957.

36 Ջ. Կիրակոսյան, Ռ. Ստահակյան, Հայաստանում 1905—1907 թթ. ռևոլյուցիոն շարժումներին նվիրված գրականության մասին («Պարտիական կյանք», 1956, № 3), Վ. Բարխուդարյան, Նոր աշխատություններ 1905—1907 թթ. ռևոլյուցիոն շարժումների մասին (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1956, № 6)։

ОСВЕЩЕНИЕ ИСТОРИИ АРМЯНО-РУССКИХ РЕВОЛЮЦИОННЫХ СВЯЗЕЙ КОНЦА XIX — НАЧАЛА XX вв. В АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

Р. В. ШАГИНЯН

Резюме

Советская армянская историография внесла свой весомый вклад в освещение истории армяно-русских исторических связей и отношений. Ею значительное внимание было уделено также проблеме революционного сотрудничества двух народов.

Еще в начале XX в. армянские марксисты подчеркивали решающую роль марксистско-ленинских идей в деле социального и национального освобождения армянского народа. После установления Советской власти в Армении работа по освещению армяно-русских революционных связей была поставлена на научную основу. В 1930—1940 гг. и особенно в 1950—1960 гг. вышло в свет много монографий, статей, сборников материалов, посвященных указанной проблеме. Невзирая на это, ряд вопросов данной темы еще нуждается в дальнейшем исследовании.